ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-ԻՆ, ԺԱՄԸ 11-00-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

- **ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ՝** **Խաչատուր Մկրտչյանի**
- **Արմավիր համայնքի ղեկավար՝** **Վարշամ Սարգսյանի**
- **Վաղարշապատ համայնքի ղեկավարի տեղակալ՝** **Արսեն Պետրոսյանի**
- **Մեծամոր համայնքի ղեկավար՝** **Վահրամ Խաչատրյանի**
- **Արաքս համայնքի ղեկավար՝** **Ղազար Ղազարյանի**
- **Խոյ համայնքի ղեկավար՝** **Արգիշտի Մեխակյանի**
- **Փարաքար համայնքի ղեկավար՝** **Լյուդվիգ Գյուլնազարյանի**
- **Բաղրամյան համայնքի ղեկավար՝** **Շանթ Առաքելյանի**
- **Ֆերիկ համայնքի ղեկավար՝** **Ռուստամ Հասանյանի**
- **ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝** **Արամ Հովհաննիսյանի**
- **ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝** **Արման Խաչատրյանի**
- **ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝** **Սերյոժա Գրիգորյանի**
- **ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ՝** **Մուշեղ Պետրոսյանի**
- **ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների**
- **Լրատվամիջոցների ներկայացուցիչների**

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2024 թվականի հուլիսի 2-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

/Դավիթ Խուդաթյան-
Հ Հ Արմավիրի մարզպետ/

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների 2024 թվականի առաջին կիսամյակի բյուջեներով նախատեսված սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին

/ Վարազդատ Մկրտչյան-
ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
ֆինանսական վարչության պետ /

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքում 2024 թվականի առաջին եռամսյակում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների վերաբերյալ

/Լիաննա Հարությունյան-
ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
իրավաբանական բաժնի պետ/

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում 2024 թվականի մայիս և հունիս ամիսների ընթացքում տեղացած կարկտահարության հետևանքով մարզի մի շարք համայնքների գյուղացիական տնտեսություններին պատճառված վնասի դիտարկումների և այդ կապակցությամբ ձեռնարկված միջոցառումների մասին

/ Արթուր Այվազյան –
Արմավիրի մարզպետի աշխատակազմի
գյուղատնտեսության և շրջակա
միջավայրի պահպանության
վարչության պետ /

5. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի իրականացման մասին

/ Ասթինե Ապիտոնյան–
Արմավիրի մարզպետի աշխատակազմի
առողջապահության և սոցիալական
ոլորտի հարցերի վարչության պետ/

6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում հանրային առողջության պահպանման և բարելավման գործառույթներ իրականացնող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների օպտիմալացման և հետագա զարգացման ուղիների մասին

/ Ասթինե Ապիտոնյան–
Արմավիրի մարզպետի աշխատակազմի
առողջապահության և սոցիալական
ոլորտի հարցերի վարչության պետ/

7. Հայտարարություններ՝

- **ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում չսկսված և ընթացքի մեջ գտնվող 2022-2023թթ. սուբվենցիայի ծրագրերի վերաբերյալ**

/Լիլիթ Մուշեղյան-
ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ/

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Դավիթ Խուդաթյանը, ողջունելով մարզի խորհրդի նիստի մասնակիցներին, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի հաստատմանը ներկայացրեց իր կողմից սահմանված <<**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2024 թվականի հուլիսի 2-ի նիստի օրակարգը հաստատելու մասին** >> որոշման նախագիծը:

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզի խորհրդի

որոշումը

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2024 թվականի հուլիսի 2-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30–ի N 647-Ն որոշմամբ սահմանված մարզի խորհրդի կազմավորման և գործունեության կարգի 12–րդ կետի պահանջով.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհուրդը

որոշում է՝

1. **Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2024 թվականի հուլիսի 2-ի նիստի օրակարգը:**

Օրակարգային՝ <<**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների 2024 թվականի առաջին կիսամյակի բյուջեներով նախատեսված սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին**>> երկրորդ հարցի կապակցությամբ զեկուցմամբ հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վարազդատ Մկրտչյանը, ով իր զեկուցմամբ նշեց, որ 2024թ-ի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից ընդամենը եկամուտների հավաքագրումը պլանավորվել է 7440935.8 հազ.դրամ՝ 2023թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 6397613.7հազ. դրամի համեմատ. ավել է պլանավորվել 1043322.1 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 7598749.2 հազ. դրամ , նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հավաքագրված 5884788.3 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 1713960.9 հազ. դրամով, կատարվել է 102.1%-ով, նախորդ տարվա 92.0%-ի համեմատ:

2024թ-ի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրումը պլանավորվել է 2202338.4 հազ. դրամ՝ 2023թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 1972387.4 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 229951.0 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 2232475.1 հազ. դրամ ,

նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հավաքագրված 1992540.5 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 239934.6 հազ. դրամով, կատարվել է 101.4%-ով, նախորդ տարվա 101.0%-ի համեմատ:

2024թ-ի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից անշարժ գույքի հարկի հավաքագրումը պլանավորվել է 474501.5 հազ.դրամ՝ 2023թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 444385.2 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 30116.3 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 403396.1 հազ. դրամ , նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հավաքագրված 351534.3 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 51861.8 հազ. դրամով, կատարվել է 85.0%-ով, նախորդ տարվա 79.1%-ի համեմատ:

2024թ-ի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից փոխադրամիջոցների գույքահարկի հավաքագրումը պլանավորվել է 886401.6 հազ.դրամ՝ 2023թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 771853.1 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 114548.5 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 795200.0 հազ. դրամ , նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հավաքագրված 809006.9 հազ. դրամի համեմատ, պակաս է հավաքագրվել 13806,9 հազ. դրամով, կատարվել է 89,7%-ով, նախորդ տարվա 104,8 %-ի համեմատ:

2024թ-ի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից տեղական տուրքերի գծով հավաքագրումը պլանավորվել է 133413,4 հազ.դրամ՝ 2023թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 114077,8 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 19335,6 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 176923,3 հազ. դրամ , նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հավաքագրված 140677,4 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 36245,9 հազ. դրամով, կատարվել է 132,6%-ով, նախորդ տարվա 123,3 %-ի համեմատ:

2024թ-ի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից պետական տուրքերի գծով հավաքագրումը պլանավորվել է 41000,0 հազ.դրամ՝ 2023թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 38740,0 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 2260,0 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 45278,1 հազ. դրամ , նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հավաքագրված. 45309,0հազ. դրամի համեմատ, պակաս է հավաքագրվել 30,9 հազ. դրամով, կատարվել է 110,4%-ով, նախորդ տարվա 117,0,0%-ի համեմատ:

2024թ-ի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից հողի և գույքի վարձակալության գծով հավաքագրումը պլանավորվել է 75975,3 հազ.դրամ՝ 2023 թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 83722,0 հազ. դրամի համեմատ կամ պակաս է պլանավորվել 7746,7 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 79072,3 հազ. դրամ , նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հավաքագրված 83309,6 հազ. դրամի համեմատ,

պակաս է հավաքագրվել 4237,3 հազ. դրամով, կատարվել է 104,1%-ով, նախորդ տարվա 99,5%-ի համեմատ:

2024թ-ի 1-ին կիսամյակի համար ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից տեղական վճարների գծով հավաքագրումը պլանավորվել է 477917,9 հազ.դրամ՝ 2023թվականի նույն ժամանակահատվածում պլանավորված 422732,3 հազ. դրամի համեմատ կամ ավել է պլանավորվել 55185,6 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը կազմել է 469776,4 հազ. դրամ , նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հավաքագրված 432468,7 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 37307,7 հազ. դրամով, կատարվել է 98,3%-ով, նախորդ տարվա 102,3%-ի համեմատ:

Օրակարգային հարցի քննարկմամբ և մտքերի փոխանակմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Դավիթ Խուդաթյանը, սեփական եկամուտների հավաքագրման շարունակական գործընթացի արդյունքներն ընդհանուր առմամբ դրական գնահատելով, **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին առաջարկեց՝ համայնքների վարչական ղեկավարների հետ համատեղ գործնական և ակտիվ աշխատանքներ տանել սեփական եկամուտների հավաքագրման բացառապես բարձր ցուցանիշներ ապահովելու նպատակով, հաշվի առնելով այն կարևորագույն հանգամանքը, որ հիմնականում բարձր ցուցանիշների ապահովումից է կախված համայնքներում տարբեր սուբվենցիոն ծրագրերի իրականացման երաշխիքը**:

Օրակարգային՝ <<**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքում 2024 թվականի առաջին եռամսյակում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների վերաբերյալ**>> երրորդ հարցի կապակցությամբ զեկուցմամբ հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Լիաննա Հարությունյանը, ով իր զեկուցմամբ նշեց, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2530-Ա հրամանով հաստատված տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2024 թվականի աշխատանքային ծրագրի համաձայն, ՀՀ Արմավիրի մարզպետի 2024 թվականի փետրվարի 7-ի N ՄՈ/74-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքում 2024 թվականի առաջին եռամսյակում իրականացվել է իրավական և մասնագիտական հսկողություն, որի արդյունքում կազմված համապատասխան փաստաթղթերը՝ արձանագրությունը և լրացված հարցաշարը, սահմանված կարգով և ժամկետներում հրապարակվել են ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքէջում՝ http://armavir.mtad.am/:

Աշխատանքային խմբի կողմից իրավական և մասնագիտական հսկողությունն իրականացվել է «Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգով:

Բաղրամյան համայնքում 1-ին եռամսյակի ընթացքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքներով արձանագրված խախտումների և թերությունների վերացման ժամկետ է սահմանված եղել մինչև 2024 թվականի հուլիսի 1-ը:

Իրավական հսկողության արդյունքում կազմված հարցաշարով խախտումներն ու թերություններն արձանագրվել են հետևյալ բնագավառներում՝

- **ֆինանսների,**
- **քաղաքաշինության, կոմունալ տնտեսության և հողօգտագործման,**
- **առևտրի և ծառայությունների,**
- **քաղաքացիների, տնտեսավարող սուբյեկտների իրավունքների,**
- **տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության,**
- **սոցիալական պաշտպանության,**
- **պաշտպանության կազմակերպման և արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման:**

<u>Մասնավորապես՝</u>

- ✓ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի պահանջի հիմքով, Բաղրամյան համայնքի 2022 և 2023 թվականների տարեկան բյուջեների մասով, համայնքի ավագանու կողմից բյուջեների կատարման վերահսկողություն իր անդամի (անդամների) և (կամ) աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով չի իրականացվել: Նշված գործառույթն իրականացվում է ավագանու որոշած պարբերականությամբ, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:
- ✓ Նույն օրենքի պահանջի հիմքով թերի է պահպանվել համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարների ուղղորդումը, որն ուղղվելու էր նախորդ (եզրափակված) բյուջետային տարում վարչական մասից ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված ելքերի գծով՝ առկա պարտավորությունների կատարմանը:

- ✓ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջի հիմքով համայնքի ավագանու կողմից չի սահմանվել համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը:
- ✓ Համայնքի ղեկավարի կողմից «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով չի հաստատվել աշխատակազմի գործավարության կարգը:
- ✓ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջի հիմքով աշխատակազմի քարտուղարի կողմից չի կազմակերպվել համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելությունը և հսկողություն չի իրականացվել քաղաքացիների հանրագրերի, դիմումների ու բողոքների քննարկման և ընթացքի նկատմամբ:
- ✓ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջի հիմքով ապահովված չէ համայնքի ավագանու հրապարակային նիստերի առցանց հեռարձակումը համայնքի պաշտոնական համացանցային կայքում:
- ✓ Համայնքի ղեկավարի կողմից չի ընդունվել համայնքի տարհանման հանձնաժողով ստեղծելու մասին համապատասխան որոշում, ինչպես նաև չի հաստատվել վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարհանման պլան:
- ✓ Համայնքապետարանում առկա չի եղել Բաղրամյան համայնքի զինապարտների գրանցամատյան (համայնքի մասշտաբով, որում կներառվեն համայնքի ենթակայության վարչական շրջաններն ամբողջությամբ) (փաստաթղթային և /կամ/ էլեկտրոնային):
- ✓ Համայնքի քաղաքաշինական կանոնադրության մեջ որպես հղումներ կիրառված են եղել չգործող և ուժը կորցրած ճանաչված ՀՀ Կառավարության որոշումներ:
- ✓ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի պահանջին համապատասխան համայնքի ավագանու կողմից հաստատված չեն 2022 և 2023 թվականների աղբահանության իրականացման կարգերը:
- ✓ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի պահանջների հիմքով թեքահարթակների մասով գործառույթներն իրականացված են մասնակի, հաշվի առնելով անհնարինության աստիճանը (մասնավորապես՝ տրանսպորտային միջոցի բացակայություն, որոշ կառույցների թեքահարթակների կառուցման անհնարինություն,

հանգստի և ժամանցի վայրերից անարգել կերպով օգտվելու պայմանի ստեղծման անհնարինություն և այլն):

- ✓ Արձանագրված խախտումներն ու թերությունները Բաղրամյան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ղեկավարի և ավագանու կողմից վերացվել են մասնակի, իսկ դրանց վերացման առումով՝ ընդունվել են համապատասխան որոշումներ:

Նշենք նաև, որ աշխատանքային խմբի կազմում ընդգրկված աշխատակիցների կողմից իրավական հսկողության հարցաշարի շրջանակներում կազմվել են նաև առանձին տեղեկանքներ՝ ֆինանսների, իրավաբանական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի, զարգացման ծրագրերի մշակման և իրականացման, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման, հողաշինության և առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վերաբերյալ:

Համընդհանուր խնդրո առարկա է նաև արխիվային գործընթացի կազմակերպման և իրականացման աշխատանքները:

Օրակարգային հարցի քննարկմամբ և մտքերի փոխանակմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Դավիթ Խուդաթյանը, ի գիտություն ընդունելով զեկուցմամբ նշված տեղեկատվությունը, **Բաղրամյան համայնքի ղեկավար Շանթ Առաքելյանին առաջարկեց՝ համայնքի ավագանու հետ համագործակցված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված խախտումներն ու թերությունները և կատարման արդյունքները գրավոր կարգով ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ**:

Օրակարգային՝ <<**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում 2024 թվականի մայիս և հունիս ամիսների ընթացքում տեղացած կարկտահարության հետևանքով մարզի մի շարք համայնքների գյուղացիական տնտեսություններին պատճառված վնասի դիտարկումների և այդ կապակցությամբ ձեռնարկված միջոցառումների մասին**>> չորրորդ հարցի կապակցությամբ զեկուցմամբ հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արթուր Այվազյանը, ով իր զեկուցմամբ նշեց, որ 2024 թվականի գյուղատնտեսական տարին սկսվել էր բարեհաջող և գրեթե բոլոր մշակաբույսերի գծով սպասվում էր բարձր բերք: 2024 թվականի մայիսի 4-ին, 5-ին, 12-ին, 25-ին և հունիսի 20–ին տեղացած կարկտահարությունները մեծ վնաս պատճառեցին մարզի գյուղատնտեսական արտադրությանը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1582-Ն որոշման պահանջների համայնքներում ստեղծված հանձնաժողովները իրականացրել են կարկտահարության հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների արձանագրում և տոկոսային հարաբերությամբ վնասների գնահատում՝ ըստ մշակաբույսերի և ըստ վնասվածության աստիճանի և կազմված ակտերը ներկայացրել են մարզային հանձնաժողովի քննարկմանը:

Մարզային հանձնաժողովում ուսումնասիրվել, քննարկվել և ամփոփվել են համայնքների կողմից ներկայացված ակտերը, որի արդյունքում պարզվել է, որ մարզի Մեծամոր, Արմավիր, Բաղրամյան և Խոյ համայնքների ընդհանուր թվով 38 բնակավայրերի 3992 հողօգտագործողներին պատկանող 5709,278 հեկտար հողատարածությունները վնասվել են կարկտահարությունից 30-100 տոկոսով:

Հայաստանի Հանրապետության կառավարության վերոհիշյալ որոշման պահանջի համաձայն Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների (կարկտահարություն) հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող մարզային հանձնաժողովը 2024 թվականի մայիսի 21–ին, հունիսի 11–ին և հունիսի 26–ին կայացած նիստերում սահմանված կարգով քննարկված և հաստատմամբ համաձայնեցված ակտերն ու համապատասխան նյութերը ՀՀ Արմավիրի մարզպետի 21.05.2024թ.N 01/12/03808–2024, N 01/12/03821–2024, 13.06.2024թ. N 01/12/04432–2024 և 26.06.2024թ. N 01/12/04689–2024 թվակիր գրություններով ներկայացվել են ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայություն՝ համապատասխան ընթացք տալու նպատակով:

Օրակարգային հարցի օրակարգային հարցի կապակցությամբ ծավալված մտքերի փոխանակմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Դավիթ Խուդաթյանը, ի գիտություն ընդունելով զեկուցմամբ ներկայացված տեղեկատվությունը, միաժամանակ **Արմավիրի մարզի խորհրդի նիստի մասնակիցներին իրազեկման կարգով հայտնեց նաև, որ ՀՀ Արմավիրի մարզպետի 31.05.2024 թվականի N 01/8.2/04077-2024 գրությամբ առաջարկվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ կարկտահարությունից տուժած և միաժամանակ գյուղատնտեսական վարկեր ունեցող հողօգտագործողներին որպես աջակցություն դիտարկել նրանց ունեցած գյուղատնտեսական վարկերի մայր գումարի և տոկոսադրույքների վճարման ժամկետների կասեցումը՝ մինչև 1 տարի ժամկետով:**

Օրակարգային՝ **<<Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի իրականացման մասին>>** հինգերորդ հարցի կապակցությամբ զեկուցմամբ հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ասթինե Ապիտոնյանը, ով իր զեկուցմամբ ներկայացրեց, որ ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 16_ի N 710_Լ որոշմամբ հաստատվել է ԼՂ-ից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի իրականացման կարգը, համաձայն որի ծրագիրն իրականացվում է 3 փուլով՝

1.Առաջին փուլում կարող են ընդգրկվել՝

- 3 և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքները, եթե ցանկանում են ձեռք բերել բնակարան կամ տուն,
- 2 անչափահաս երեխա ունեցող ընտանիքները, եթե ցանկանում են կառուցել տուն,
- զոհվածի կամ կերակրողին կորցրածի կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անդամով ընտանիքները, եթե ցանկանում են ձեռք բերել բնակարան կամ տուն կամ կառուցել այն,
- գործող հիփոթեք ունեցող ընտանիքները, որի դեպքում աջակցությունը կուղղվի տվյալ հիփոթեքի մարմանը,
- ցանկացած այլ կազմի ընտանիք, որը կհամարվի վարկունակ և բանկից կստանա աջակցության առնվազն 50%-ի չափով լրացուցիչ վարկ:

2. Երկրորդ փուլում կարող են ընդգրկվել՝

- 2 և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքները, եթե ցանկանում են ձեռք բերել բնակարան կամ տուն,
- 1 անչափահաս երեխա ունեցող ընտանիքները, եթե ցանկանում են կառուցել տուն:

3. Երրորդ փուլում կարող են ընդգրկվել՝

- ցանկացած կազմով ընտանիքներ, որոնք ընդգրկված չեն առաջին երկու փուլերում:

Ծրագրի շրջանակում աջակցությունը տրվում է ընտանիքի յուրաքանչյուր անդամի՝ 2-ից 5 մլն դրամի շրջանակում:

Միջոցառման շրջանակում դիմումներն ընդունվում են առցանց եղանակով՝

- հունիսի 15-ից՝ բնակարանի կամ անհատական բնակելի տան ձեռքբերման հավաստագրի տրամադրման համար
- հուլիսի 15-ից՝ անհատական բնակելի տան կառուցման հավաստագրի տրամադրման համար,
- օգոստոսի 1-ից՝ գործող հիփոթեքային վարկի մարման աջակցության հավաստագրի տրամադրման համար:

Աջակցության չափը կազմում է՝

- 5 մլն դրամ, եթե բնակարանը կամ տունը ձեռք է բերվում/կառուցվում է ներդրումային առաջնահերթություն ունեցող հետևյալ քաղաքային և գյուղական բնակավայրերից որևէ մեկում,
- 4 մլն դրամ, եթե տունը կամ բնակարանը ձեռք է բերվում/կառուցվում է հետևյալ ներդրումային առաջնահերթություն ունեցող քաղաքային և գյուղական բնակավայրերից որևէ մեկում՝ Բաղրամյան խոշորացված համայնք **Արգինա, Բագարան, Երվանդաշատ, Կողբավան, Վանանդ և Բաղրամյան բնակավայրեր,**
- 3 մլն դրամ, եթե բնակարանը կամ տունը ձեռք է բերվում/կառուցվում է վերոնշյալ անվանացանկերում չներառված բնակավայրերում (բացառություն կկազմեն Երևանի 1-ին և 2-րդ գոտիները),
- 2 մլն դրամ աջակցություն, եթե առկա է գործող հիփոթեք, բացառությամբ՝ Երևանի 1-ին և 2-րդ գոտիներում գտնվող գույքի:

Ծրագրի իմաստով շահառուն 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքն է (այդ թվում՝ մեկ անձից բաղկացած), բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի N 169-Լ որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագրի շահառուների՝ անկախ իրավունքի իրացման փաստից.

2) ընտանիքների, որոնց անդամներից առնվազն մեկը 2023 թվականի սեպտեմբերի 19-ի կամ դիմելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետությունում ունի սեփականության կամ ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով (50 տոկոս և ավելի մասնաբաժնով) պատկանող բնակելի անշարժ գույք կամ «Գույքի նկատմամբ իրավունքների

պետական գրանցման մասին» օրենքով սահմանված կարգով գրանցված գնման իրավունք, եթե ընտանիքի յուրաքանչյուր անդամի հաշվով բնակելի մակերեսը գերազանցում է 12 քմ՝ բացառությամբ հիփոթեքային վարկի շրջանակներում գրավի առարկա հանդիսացող միակ անշարժ գույքի կամ գնման իրավունքի:

Ծրագրի իմաստով ընտանիքը ծրագրին դիմելու օրվա դրությամբ գրանցված ամուսնության մեջ գտնվող ամուսիններից (միայնակ ծնողից), նրանց՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ 18 տարին չլրացած երեխաներից, չամուսնացած զավակներից, ծնողներից, տատից, պապից, չամուսնացած եղբորից, քրոջից բաղկացած միավորն է:

Շահառու միավորի կազմը որոշվում է բոլոր չափահաս անդամների համատեղ դիմում-հայտարարության հիման վրա:

Ընտանիքը (ընտանիքի անդամը) որպես շահառու ծրագրից կարող է օգտվել մեկ անգամ (մեկ հիփոթեքային վարկի շրջանակներում):

Ծրագրի հիմնական պայմաններն են՝

1) շահառու ընտանիքի բոլոր անդամներն ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն.

2) ձեռք բերվող կամ կառուցվող բնակարանի կամ անհատական բնակելի տան բնակելի մակերեսը շահառու ընտանիքի յուրաքանչյուր անդամի հաշվով չպետք է պակաս լինի 12 քմ-ից.

3) ձեռք բերվող բնակարանի կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի կամ անհատական բնակելի տան ձեռքբերման գինը չպետք է գերազանցի 55 մլն դրամը.

4) ձեռք բերվող բնակարանի կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի կամ անհատական բնակելի տան կամ կառուցվող անհատական բնակելի տան և դրա կառուցման համար նախատեսված հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցվում է շահառու ընտանիքի բոլոր անդամների անվամբ՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով.

5) կատարվող կանխավճարի նվազագույն չափը (բացառությամբ, եթե աջակցությունը տրամադրվում է անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով հիփոթեքային վարկ ստացող շահառուին) կազմում է ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդային շուկայից ձեռք բերվող բնակելի անշարժ գույքի գնահատված և ձեռքբերման արժեքներից նվազագույնի առնվազն 1 տոկոսը, որն իրականացնում է պետությունը.

6) հիփոթեքային վարկը տրամադրվում է ծրագրի շրջանակներում գործընկեր ֆինանսական կազմակերպության կողմից.

7) հիփոթեքային վարկի նվազագույն ժամկետը 120 ամիս է:

Եթե բնակարանի կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի կամ անհատական բնակելի տան ձեռքբերման հավաստագրի կամ անհատական բնակելի տան կառուցման հավաստագրի իրացման և սույն հավելվածի 12-րդ կետում նշված հողամասի ձեռքբերման արդյունքում առաջանում է դրական մնացորդ, ապա այն կարող է իրացվել հետևյալ ուղղություններով և սահմանաչափերով՝

1) գյուղատնտեսական նշանակության հողամասի գնում՝ մինչև 5 մլն դրամ և

2) ծրագրի շրջանակներում ձեռքբերված անշարժ գույքի վերանորոգում՝ մինչև 4 մլն դրամ և

3) կահույքի և կենցաղային տեխնիկայի գնում՝ մինչև 2 մլն դրամ:

Ծրագրով նախատեսված աջակցությունն ամբողջությամբ դադարեցվում է, եթե՝ ընտանիքի՝ 55 տարին չլրացած առնվազն 2 չափահաս անդամներից յուրաքանչյուրը կամ 1 անչափահաս անդամը նույն օրացուցային տարվա ընթացքում 183 և ավելի օր գտնվում են Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս՝ բացառությամբ, եթե ընտանիքի անդամը Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս է եղել աշխարհի լավագույն բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական, ինչպես նաև պետական պատվերով, 7 միջպետական և միջգերատեսչական համաձայնագրերով օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի (դիպլոմավորված մասնագետի, ինտեգրացված), մագիստրատուրայի, ասպիրանտուրայի և այլ կրթական ծրագրերով առկա ուսուցմամբ սովորելու կամ ռազմական ուսումնական կամ քաղաքացիական ավիացիայի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու կամ ազատազրկման դատապարտվածների պատիժը կրելու համար:

Ծրագրով նախատեսված աջակցության դադարեցման դեպքում ձեռք բերված կամ կառուցվող բնակարանի կամ անհատական բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է պետությանը:

Շահառուն իրավունք ունի օգտվելու ծրագրից՝ անկախ բնակարանային ապահովության պետական աջակցության այլ ծրագրերից (եկամտահարկի վերադարձի, երեխա ունեցող

ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրերից) օգտվելու հանգամանքից:

Օրակարգային հարցի քննարկմամբ և մտքերի փոխանակմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Դավիթ Խուդաթյանը, ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 16_ի N 710_Լ որոշմամբ հաստատված ԼՂ-ից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի իրականացման գործընթացում առկա խնդիրների առնչությամբ համապատասխան պարզաբանումներ տալով բարձրացված հարցադրումներին, **Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին առաջարկեց՝**

ա/ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչության շրջանում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների հետ համագործակցված և նպատակային աշխատանքներ /տեղեկատվական, խորհրդատվական և այլն/ տանել բնակարանային ապահովման, ինչպես նաև պետական աջակցության մյուս ծրագրերից դուրս մնացած ընտանիքներին պատշաճ տեղեկատվություն տրամադրելու նպատակով,

բ/ բակային և անհատական այցելությունների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պարբերաբար կազմակերպվող քաղաքացիների ընդունելությունների ընթացքում հատուկ ուշադրություն դարձնել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց առաջնային կարիքների արձագանքին, հումանիտար օգնությունների ճիշտ և հասցեական բաշխմանը:

Օրակարգային՝ <<**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում հանրային առողջության պահպանման և բարելավման գործառույթներ իրականացնող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների օպտիմալացման և հետագա զարգացման ուղիների մասին**>> վեցերորդ հարցի կապակցությամբ զեկուցմամբ հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ասթինե Ապիտոնյանը, ով իր զեկուցմամբ նշեց, որ Արմավիրի մարզում գործում են թվով 47 բուժ ամբուլատորիաներ, որոնք առողջապահական ծառայություններ են մատուցում Արմավիրի մարզի և ԼՂ-ից տեղահանված ազգաբնակչությանը:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածների **առողջապահության բնագավառում** համայնքի պարտադիր խնդիրներն են՝

- համայնքում մարզական կյանքի կազմակերպումը, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը
- համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի առաջնային բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը.
- համայնքի հասարակական կյանքին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության խթանումը.
- բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

Նշված օրենքի համաձայն՝

1. **առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում համայնքի ղեկավարն իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.**

- կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների և մարզական կազմակերպությունների գործունեությունը,

2. **առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում համայնքի ղեկավարը իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները.**

- կազմակերպում է համայնքի տարածքում արտահիվանդանոցային ձևով բժշկական օգնության և սպասարկման իրականացումը.
- աջակցում է համայնքի տարածքում իրականացվող վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելիչ և սանիտարահակահամաճարակային աշխատանքներին.
- աջակցում է առողջ ապրելակերպի, ֆիզիկական ակտիվության քարոզչության և ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման և երկրորդային ծխով պայմանավորված վնասի վերաբերյալ իրականացվող իրազեկման աշխատանքներին:

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ասթինե Ապիտոնյանը միաժամանակ նշեց, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9 ի N 174-Լ որոշմամբ հաստատվել է ՀՀ առողջապահության համակարգի 2023-2026 թվականների զարգացման ռազմավարությունը և դրանից բխող միջոցառումների ցանկը: Ի դեպ, ռազմավարության գերակա խնդիրները և միջոցառումները սահմանվել են՝ հիմք ընդունելով երկրի սոցիալ-ժողովրդագրական ու տնտեսական զարգացումը, առողջապահության համակարգից բնակչության ակնկալիքները, համաճարակաբանական իրավիճակը, համընդհանուր առողջապահական ծածկույթի ապահովման համար անհրաժեշտ նախապայմանների ստեղծման, առողջապահական ծառայությունների որակի բարելավման նպատակով բժշկական օգնություն և սպասարկման արդյունավետության բարձրացման, առողջության առաջնային պահպանման արդիականացման, շարունակական զարգացման և հզորացման, ԱԱՊ օղակի մոդելի և օրինակելի կառուցվածքի սահմանման, միջոցների առավել արդյունավետ ու համաչափ բաշխումը երաշխավորելու նպատակով ֆինանսավորման նոր մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը: Ըստ այդմ, մարզային մակարդակում օրակարգային հարց է դարձել մարդկային ներուժի (ավագ և միջին բուժանձնակազմ) և ռեսուրսների առկայության ապահովումն առողջապահության համակարգի բոլոր օղակներում, և առողջապահական ծառայությունների ու բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող իրավաբանական անձանց ոլորտում նախաձեռնված վերակազմավորման գործընթացների ավարտին հասցնելը: Ուստի սահմանվել են առաջիկա տարիների համար ոլորտի զարգացման ուղենիշները և անհրաժեշտ թիրախային միջոցառումները, որոնք ուղղված են մասնավորապես՝ բնակչության առողջության պահպանմանը և բարելավմանը, բնակչության հոգեկան առողջության խնդիրների կանխարգելմանը և արդյունավետ բուժմանը, առողջապահության ոլորտի մարդկային ներուժի պատրաստմանը, արդյունավետ պլանավորման և կառավարման միջոցով բժշկական հաստատություններին բարձրագույն և հետբուհական ու միջին մասնագիտական կրթությամբ որակյալ մասնագետներով ապահովմանը:

Նշված նպատակներին հասնելու ռազմավարական ուղղություններն են՝ արտահիվանդանոցային և շտապ օգնության ծառայությունները, ընտանեկան բժշկության համակարգում կներդրվեն մուլտիդիսցիպլինար թիմեր՝ ժամանակակից առաջադեմ փորձից ելնելով: Այդ նպատակով իրականացվելու է՝

ա. համայնքների խոշորացման ծրագրին համահունչ ԱԱՊ հաստատությունների կառուցվածքի մասթեր-պլանի մշակում, պահպանելով որակյալ և արդյունավետ ԱԱՊ ծառայությունների հասանելիությունը բնակչության համար,

բ. ԱԱՊ հաստատություններում ծառայությունների մատուցման մոդելի վերանայում,

գ.ԱԱՊ օղակում դեղորայքային ապահովման մոդելի և ծավալի վերանայում՝ մասնավորապես, քրոնիկ հիվանդություններ ունեցող բոլոր պացիենտների համար դեղերի ապահովում:

Չնայած այն բանին, որ ԱԱՊ օղակում մատուցվող հիմնական ծառայություններն անվճար են բնակչության համար, սակայն դրանց սպառումը ցածր է մեկ բնակչի հաշվով շուրջ 3.5 հաճախում:

Օրակարգային հարցի քննարկմամբ և մտքերի փոխանակմամբ, **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Դավիթ Խուդաթյանը, կարևորելով Արմավիրի մարզում առողջության առաջնային պահպանման գործառույթներ իրականացնող կազմակերպությունների խոշորացման գործընթացը, որն իր հերթին կնպաստի հանրային առողջության պահպանման և բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքների ակտիվացմանը և հետագա զարգացման նոր և արդյունավետ ուղիներ նախանշելու գործին, Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին առաջարկեց՝ առողջության առաջնային պահպանման գործառույթներ իրականացնող կազմակերպությունների խոշորացման գործընթացն իրականացնելիս կիրառել Խոյ համայնքում այդ ուղղությամբ տարված դրական ու արդյունավետ աշխատանքի փորձը:**

Օրակարգային յոթերորդ հարցով ընդգրկված << **ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում չսկսված և ընթացքի մեջ գտնվող 2022-2023թթ. սուբվենցիայի ծրագրերի վերաբերյալ** >> հայտարարությամբ հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Լիլիթ Մուշեղյանը, ով իր հայտարարությամբ նշելով, որ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի կողմից ամփոփվել են ընթացիկ տարում իրականացվող սուբվենցիոն ծրագրերի կիսամյակային մշտադիտարկման արդյունքները, ներկայացրեց ծրագրերի իրականացման ընթացքի վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

1) 2022թ. հավանության արժանացած սուբվենցիոն ծրագրեր (41 ծրագիր 132 ենթածրագրով)

- 01.07.2024թ. դրությամբ շինարարական աշխատանքներն ավարտված են 114 ենթածրագիր (2024թ-ին՝ 1)
- ընթացքի մեջ են 13 ենթածրագիր

	Արմավիր համայնք -1	
1.	Արմավիր քաղաքի թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի	88%

	հիմնանորոգում	
	Վաղարշապատ համայնք -1	
2.	Էջմիածին քաղաքի թիվ 14 «Ձնծաղիկ» մանկապարտեզի հիմնանորոգում	91% -ավարտական փուլ
	Մեծամոր համայնք -4	
3.	Մեծամոր համայնքի ք.Մեծամորի թիվ 2 մանկապարտեզի հիմնանորոգման և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներ	79%
4.	Մեծամոր համայնքի ք.Մեծամորի թիվ 3 մանկապարտեզի հիմնանորոգման և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներ	87%
5.	Տարոնիկ բնակավայրի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքներ	99% -ավարտական փուլ
6.	Տանձուտ բնակավայրի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքներ	99% -ավարտական փուլ
	Արաքս համայնք -1	
7.	Գայ գյուղի համայնքապետարանի շենքի հիմնանորոգում	95%-ավարտական փուլ
	Խոյ համայնք -6	
8.	Հայթաղ գյուղի մանկապարտեզի վերակառուցում և ձախ կողաճակատին կիպ միահարկ կցակառույց շինության իրականացում	87%
9.	Դողս գյուղում Դողս-Աղավնատուն տանող ճանապարհի ասֆալտապատում	.82%
10.	Արագած գյուղի մշակույթի տան 2-րդ և 3-րդ հարկերի վերանորոգում և ջեռուցում	74%
11.	Մոնթեավան բնակավայրի հուշարձան-պուրակի կառուցում	38%
12. 13.	Գեղակերտ գյուղում Մ.Սարյան, Մարշալ Բաղրամյան փողոցների և Մ.Մարշալ Բաղրամյան փողոցից մինչև մշակույթի տան հարակից տարածքի ասֆալտապատում Այգեշատ գյուղի Երիտասարդական և Մայիսյան փողոցների ասֆալտապատում	2% 5%

- չեն սկսվել 5 ենթածրագրեր, ըստ համայնքների պատկերը հետևյալն է՝

	Խոյ համայնք -2 ծրագրի 3 ենթածրագիր	
1.	Լեռնամերձ գյուղի Բարեկամություն փողոցի /գերեզմաններ տանող ճանապարհ/ ասֆալտապատում	

2.	Խոյ համայնքի խորքային հորերի հիմնանորոգում (Մրգաստան N-1)	Մասամբ սկսվել է և դադարեցվել
3.	Մոնթեավան գյուղի 1-ին և 7-րդ փողոցների գազիֆիկացում	
	Փարաքար համայնք -1 ծրագիր	
4.	Փարաքար բնակավայրի փողոցի /Սևան/ տուֆով սալարկման շինարարական աշխատանքներ	
	Բաղրամյան համայնք -1 ծրագիր	
5.	Լեռնագոգ բնակավայրի ոռոգման սնուցող ջրագծի կառուցում	

2) 2023թ. հավանության արժանացած սուբվենցիոն ծրագրեր (31 ծրագիր 145 ենթածրագրով)

-01.07.2024թ. դրությամբ շինարարական աշխատանքներն ավարտված են -66 ենթածրագիր (2024թ-ին -9),
-ավարտական փուլում են 9-ը,
-ընթացքի մեջ են 25-ը,
-չեն սկսվել 45 ենթածրագրեր, ըստ համայնքների պատկերը հետևյալն է՝

	Արմավիր համայնք -2 ծրագրի 4 ենթածրագիր	
1.	Արմավիր քաղաքի թիվ 2 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի գույքի և սարքավորումների ձեռքբերում	
2.	Արմավիր քաղաքի թիվ 11 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի գույքի և սարքավորումների ձեռքբերում	
3.	Խանջյան գյուղի մանկապարտեզի գույքի և սարքավորումների ձեռքբերում	
4.	Արմավիր քաղաքի թիվ 11 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում	

	Մեծամոր համայնք -4 ծրագրի 13 ենթածրագիր	
1.	Ալաշկերտ բնակավայրի խմելու ջրամատակարարման ցանցի կառուցում	
2.	Հայկավան բնակավայրի մանկապարտեզի կառուցում և հարակից տարածքի բարեկարգում	
3.	Շենավան բնակավայրի մանկապարտեզի կառուցում և հարակից տարածքի	

	բարեկարգում	
4.	Նորապատ բնակավայրի 8-րդ փողոցի ճանապարհի հիմնանորոգում	
5.	Բամբակաշատ բնակավայրի Բամբակաշատ-Նոր Արմավիր ճանապարհահատվածի հիմնանորոգում	
6.	Արտաշար բնակավայրի «Ախթամար» խորքային հորերի վերականգնում	
7.	Վարդանաշեն բնակավայրի «Գյուղի սկզբի» խորքային հորերի վերականգնում	
8.	Արևիկ բնակավայրի «Հովիկի» խորքային հորերի վերականգնում	
9.	Մրգաշատ բնակավայրի «Ճլլիկներ 2-րդ» խորքային հորերի վերականգնում	
10.	Արգավանդ բնակավայրի «Վալոդի» խորքային հորերի վերականգնում	
11.	Փշատավան բնակավայրի «Ամարի» խորքային հորերի վերականգնում	
12.	Երասխահուն բնակավայրի «Ղաչաղի» խորքային հորերի վերականգնում	
13.	Այգեշատ բնակավայրի «Կոկոլի» խորքային հորերի վերականգնում	

	Խոյ համայնք - 5 ծրագրի 15 ենթածրագիր	
1.	Արշալույս բնակավայրի 19 փողոցի կապիտալ վերանորոգման, ասֆալտապատման աշխատանքներ	
2.	Արշալույս բնակավայրի 35 փողոցի կապիտալ վերանորոգման, ասֆալտապատման աշխատանքներ	
3.	Արագած բնակավայրի դեպի հուշարձան-պուրակ տանող ճանապարհի կապիտալ վերանորոգման, ասֆալտապատման աշխատանքներ /դեպի գերեզմաններ/	
4.	Մրգաստան բնակավայրի եկեղեցի տանող ճանապարհի կապիտալ վերանորոգում՝ սալարկում	
5.	Մոնթեավան բնակավայրերի 1-ին փողոցի մայթերի սալարկում	
6.	Այգեշատ բնակավայրի ներտնտեսային ոռոգման ջրագծերի վերակառուցում	

7.	Ծիածան բնակավայրի ներտնտեսային ոռոգման ջրագծերի վերակառուցում	
8.	Ծաղկունք բնակավայրի ներտնտեսային ոռոգման ջրագծերի վերակառուցում	
9.	Արագած բնակավայրի ներտնտեսային ոռոգման ջրագծերի վերակառուցում	
10.	Դաշտ բնակավայրի Բարեկամություն և Համերաշխություն փողոցների գազաֆիկացում	
11.	Ծաղկալանջ գյուղի 2-րդ փողոցի 1-ին նրբանցք, 13-րդ, 17-րդ, 18-րդ փողոցների գազաֆիկացում	
12.	Արագած գյուղում գոյություն ունեցող մշակույթի տան տանիքի ֆոտովոլտային կայանի կառուցում	
13.	Աղավնատուն գյուղում գոյություն ունեցող մշակույթի տան տանիքի ֆոտովոլտային կայանի կառուցում	
14.	Հայթաղ գյուղում գոյություն ունեցող մշակույթի տան տանիքի ֆոտովոլտային կայանի կառուցում	
15.	Աղավնատուն բնակավայրի մանկապարտեզի շենքի հիմնանորոգում	

	Փարաքար համայնք - 2 ծրագրի 8 ենթածրագիր	
1.	Փարաքար համայնքի Փարաքար բնակավայրի Է.Թևոսյան փողոցի տուֆով սալարկում	
2.	Փարաքար բնակավայրի մանկապարտեզի հիմնանորոգում և բակային տարածքի բարեկարգում	
3.	Թաիրով բնակավայրի մանկապարտեզի հիմնանորոգում և բակային տարածքի բարեկարգում	
4.	Մերձավան բնակավայրի մանկապարտեզի հիմնանորոգում և բակային տարածքի բարեկարգում	
5.	Մուսալեռ բնակավայրի մանկապարտեզի հիմնանորոգում և բակային տարածքի բարեկարգում	

6.	Նորակերտ բնակավայրի մանկապարտեզի հիմնանորոգում և բակային տարածքի բարեկարգում	
7.	Այգեկ բնակավայրի մանկապարտեզի հիմնանորոգում և բակային տարածքի բարեկարգում	
8.	Պտղունք բնակավայրի մանկապարտեզի հիմնանորոգում և բակային տարածքի բարեկարգում	

	Բաղրամյան համայնք - 3 ծրագրի 5 ենթածրագիր	
1.	Բագարան բնակավայրի Գևորգ Մարզպետունի փողոցի ասֆալտապատում	
2.	Երվանդաշատ բնակավայրի Խաչին Տակ փողոցի ասֆալտապատում	
3.	Դալարիկ բնակավայրի մշակույթի տան տանիքին 50 կՎտ հզորության արևային համակարգի տեղադրման աշխատանքներ	
4.	Բագարան բնակավայրի գյուղապետարանի շենքի տանիքին 25 կՎտ հզորության արևային համակարգի տեղադրման աշխատանքներ	
5.	Շենիկ բնակավայրի մանկապարտեզի վերանորոգում	

Հաշվի առնելով մշտադիտարկման արդյունքները՝ կարևորվեց հետևյալ հարցերի հետևողական լուծումը.

1) Ուշադրություն դարձնել 2022-2023թթ. շինարարական աշխատանքները չսկսված ծրագրերի սահմանված կարգով հետագա ընթացքը ապահովելու ուղղությամբ:
2) Ուշադրություն դարձնել 2022-2023թթ. ընթացքի մեջ գտնվող ծրագրերի շինարարական աշխատանքները որակով և պայմանագրով/համաձայնագրով սահմանված վերջնաժամկետում ավարտելու ուղղությամբ:
3) Ուշադրություն դարձնել, որ շին.աշխատանքներն ավարտված ծրագրերի/ենթածրագրերի կատարողական փաստաթղթերի ամբողջական փաթեթները հնարավորինս արագ ներկայացվեն Արմավիրի մարզպետի աշխատակազմ՝ Կառավարության մասնաբաժնի հատկացման միջնորդությունները սահմանված կարգով ՏԿԵՆ ներկայացնելու համար:

4) Ուշադրություն դարձնել, որ մարզպետի աշխատակազմի կողմից համայնքապետարաններին վճարված կառավարության համապատասխան որոշումներով հատկացված գումարներն առանց ուշացումների վճարվեն կապալառու, տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպություններին՝ Արմավիրի մարզպետի աշխատակազմ ներկայացնելով վճարման հանձնարարագրերը, ինչպես նաև օբյեկտի ավարտական և շահագործման ակտերը:
5) Այս ամենին զուգահեռ, արդեն առկա են դրական հավանության արժանացած 2024 թվականի ծրագրեր՝ 11 /48 ենթածրագրերով/, առաջարկվել է համայնքների ղեկավարներին օրենսդրությամբ սահմանված կարգով սկսել ծրագրերի իրականացման մրցութային գործընթացները, մասնավորապես՝

01.07.2024թ. դրությամբ 2 ծրագրի/6 ենթածրագրի մրցույթները հայտարարված են, 1 ծրագրի/2 ենթածրագրի մրցույթները կայացել են և պայմանագրերի կնքման փուլում են, 1 ծրագրի շին.աշխատանքներն ընթացքի մեջ են (Նորապատ բնակավայրի 2-րդ և 9-րդ փողոցների կոյուղու կառուցում), 2-ի շին.աշխատանքները դեռևս չեն սկսվել, 1-ը ավարտական փուլում է (Մրգաշատ բնակավայրի 9-րդ փողոցի ճանապարհահատվածի ասֆալտապատում): Մնացած ծրագրերի մասով սպասում ենք Միջգերատեսչական հանձնաժողովի նիստերի արձանագրությունների ստացմանը:

6) Հունիսի 26-ին ստացել ենք 2025թ. սուբվենցիոն ծրագրերի նախնական հայտերի վերաբերյալ ոլորտային գերատեսչությունների կարծիքները և դիտողությունները, և մարզպետի շրջաբերական գրությամբ առաջարկվել է առաջնահերթ լրամշակել հայտերն ու տեխնիկական բնութագրերը, սկսել ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման մրցութային գործընթացը, որից հետո համայնքները կկարողանան նախապատրաստել և ներկայացնել 2025թ. սուբվենցիայի ամբողջական փաթեթները՝ ՀՀ կառավարության N 1708-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ մինչև ս.թ. նոյեմբերի 25-ը:

Օրակարգում ընդգրկված հայտարարության քննարկմամբ և մտքերի փոխանակմամբ, **ՀՀ Արմավիրի մարզպետ Դավիթ Խուդաթյանն իր խոսքում մեկ անգամ ևս համայնքների ղեկավարների ուշադրությունը հրավիրեց 2024 թվական տեղափոխված, ընթացքի մեջ գտնվող և 2022, 2023 թվականների հավանության արժանացած սուբվենցիոն ծրագրերը սահմանված ժամկետում ավարտելու խնդրի վրա:** Մարզպետն անդրադարձավ նաև 2024 թվականի դրական հավանության արժանացած սուբվենցիոն ծրագրերին և առաջարկեց սեղմ ժամկետում հայտարարել այդ ծրագրերի իրականացման մրցույթները, ինչպես նաև հորդորեց հնարավորինս սեղմ ժամկետում մարզպետի աշխատակազմ ներկայացնել դիտողությունների հիման վրա լրամշակված ծրագրերի փաթեթները՝ միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար: Իսկ 2024 թվականի հաստատման փուլում գտնվող ծրագրերի մասով, հայտնեց, որ միջգերատեսչական հանձնաժողովի հաջորդ նիստերի արձանագրությունները ստանալուն պես կներկայացվեն

համապատասխան համայնքապետարաններ՝ մրցութային գործընթաց սկսելու համար: Մարզպետը նշեց նաև, որ սուբվենցիոն ծրագրերի պատշաճ իրականացման ուղղությամբ անելիքները շատ են և ընթացիկ տարում մարզպետի աշխատակազմ-համայնքապետարաններ համագործակցությամբ մեծ ծավալի աշխատանք դեռևս կա իրականացնելու 2025 թվականի սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթների կազմման և մինչև 2024 թվականի նոյեմբերի 25-ը ներկայացնելու ուղղությամբ:

Մարզպետը միաժամանակ մարզի համայնքների ղեկավարներին առաջարկեց քննարկել չսկսված ծրագրերի առաջնահերթությունների և նպատակահարմարության հարցը, հնարավորինս սեղմ ժամկետում լուծել դրանց ընթացքը օրենսդրությամբ սահմանված կարգով:

Օրակարգային հարցերի ու հայտարարության քննարկմամբ և ամփոփմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Դավիթ Խուդաթյանը Արմավիրի մարզի խորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

2024-07-04 15:58:08 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝ ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

Արձանագրող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի անձնակազմի կառավարման,
փաստաթղթաշրջանառության և հասարակայնության
հետ կապերի վարչության
պետ՝Դավիթ Դավթյան